Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 3

Ք. Երևան, 06 փետրվարի 2023 թվական

Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (ՍԱՏՄ) կառավարման խորհրդի (Խորհուրդ) արտահերթ նիստի

Մասնակցում էին՝

Վ. Քերոբյան- ՀՀ էկոնոմիկայի նախարար (Խորհրդի նախագահ)

Ա. Դանիելյան– ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ (Խորհրդի անդամ)

Լ. Նանուշյան – ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ (Խորհրդի անդամ)

Ա. Պողոսյան – ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)

Լ. Բալյան - ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)

Ա. Առաքելյան – ՀՀ ԳԱԱ-ի Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի տնօրեն, ավագ գիտաշխատող (Խորհրդի անդամ)

Մ. Սանդոյան - «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ կառավարման խորհրդի անդամ (Խորհրդի անդամ)

Վ. Ուռուտյան -Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ռեկտոր (Խորհրդի անդամ)

Կ. Չիլինգարյան - «Սպառողների խորհրդատվության կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ (Խորհրդի անդամ)

Ա. Առուշանյան – ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի օգնական

Է. Բասենցյան- ՍԱՏՄ իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության փաստաթղթաշրջանառության բաժնի պետ (Խորհրդի քարտուղար)

Հրավիրված էին՝

Գ. Սարոյան- ՍԱՏՄ ղեկավարի տեղակալ, ղեկավարի պարտականությունները կատարող

Ն. Հայրապետյան - ՍԱՏՄ ղեկավարի տեղակալ,

Ա. Շատվորյան - ՍԱՏՄ ղեկավարի տեղակալ,

Ա. Բաբայան - <<Ստանդարտների ազգային ինստիտուտ>> ՓԲԸ տնօրեն

Մ. Երիցյան- ՍԱՏՄ իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության պետ,

Ա. Հակոբյան - ՍԱՏՄ որակի ապահովման վարչության գլխավոր մասնագետ, վարչության պետի պարտականությունները կատարող,

Ա. Հարությունյան – ՍԱՏՄ իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին

Բացակայում էր՝

Ա. Խոջոյան – ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Ողջունելով ներկաներին՝ Խորհրդի նախագահ Վ. Քերոբյանը փաստեց, որ քվորումն ապահովված է: Ներկայացրեց օրակարգը և առաջարկեց քվեարկել: Միաժամանակ հայտնեց, որ Խորհուրդը քննարկելու է որպես Տեսչական մարմնի ղեկավարի թեկնածու Արմեն Հայրապետյանի ներկայացման հարցը:

Օրակարգային հարցերի առնչությամբ Ա. Դանիելյանն առաջարկեց քննարկել 1-ին հարցը, և հավանություն տալու դեպքում Ա. Հայրապետյանը հնարավորություն կունենա լսել, թե ինչ խնդիրներ կան Տեսչական մարմնում:

Ա. Առաքելյանի հարցին, թե թեկնածուն ընտրվել է մրցութային կարգով, թե պաշտոնը նշանակովի է, նախարարը պարզաբանեց, որ պաշտոնը նշանակովի է:

Օրակարգը հաստատվեց միաձայն, և Խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը:

Նախարարը ներկայացրեց, որ Ա. Հայրապետյանը պետական կառավարման համակարգում աշխատել է շուրջ 25 տարի և զբաղեցրել է պատասխանատու պաշտոններ ՀՀ ֆինանսների, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություններում, զբաղեցրել է ՀՀ ֆինանսների փոխնախարարի պաշտոնը, և այժմ, հաշվի առնելով Ա. Հայրապետյանի պատկառելի կարիերան՝ նպատակահարմար են գտել նրա թեկնածությունը առաջադրել այս պաշտոնում:

Թեկնածուի ընտրության հիմնական գործոնը այն է եղել, որ Ա. Հայրապետյանն ունի համակարգեր կառուցելու, ստեղծելու մեծ փորձ, համակարգաստեղծ անձնավորություն է, խնդիրներին տալիս է խորքային, հիմնավոր լուծումներ: Այս տեսանկյունից, իրենց համար շատ կարևոր է, որ կառույցի ղեկավարը լինի հենց այսպիսի կարողություններով օժտված անձնավորություն, քանի որ պետք է համակարգային տրանսֆորմացիայի ենթարկել սննդամթերքի անվտանգության համակարգը: Զուգահեռաբար կքննարկվի սննդամթերքի անվտանգության ռազմավարությունը, պետք է ձևափոխել սննդամթերքի անվտանգության վերահսկման համակարգ՝ ավելի թվային, ավելի սիստեմների վրա հիմնված և ավելի մոդեռնիզացված, ինչը ավելի համահունչ կլինի այսօրվա մարտահրավերներին:

Այս պաշտոնում Ա. Հայրապետյանը կկարողանա այդ համակարգերը ստեղծել, ինչը թույլ կտա սննդամթերքի անվտանգության ոլորտում ավելի լավ ցուցանիշներ արձանագրել:

Ա. Դանիելյանի կարծիքով՝ ըստ էության, նկարագրվեց Ա. Հայրապետյանի կարևորագույն դերակատարումը, որովհետև իրավամբ, ինչպես նշվել է բազմիցս, մենք էլ համակարծիք ենք, որ Տեսչական մարմինը պետք է վերահսկողության նոր մեթոդներ կիրառի, թվային համակարգերի գործադրմամբ, որտեղ Ա. Հայրապետյանի փորձը միանշանակ կլինի շատ կարևոր, հիմնական գործառույթներից մեկը, Տեսչական մարմնի ներգրավվածությունը պետք է լինի: Նա առաջարկեց Ա. Հայրապետյանին՝ ներկայացնել իրեն:

Ա. Հայրապետյանը շնորհակալություն հայտնելով՝ ներկայացրեց, որ իր կարծիքով առաջին հարցը, որ բոլորի մոտ ծագելու է, վերաբերում է մասնագիտական գիտելիքներին և մասնագիտական կարողություններին, ինքն այս որոշումը շատ դժվար է կայացրել, որովհետև ֆինանսների բնագավառում աշխատել է երկար տարիներ, և առաջարկը ստանալուց հետո բնականաբար իր մեջ միանգամից հարց է ծագել՝ մասնագիտական գիտելիքների պակասը հնարավոր է արդյոք լրացնել: Այն արժեքները, ինչի մասին խոսվեց, իր անցած ճանապարհի ընթացքում, իր ունեցած նպաստը պետական համակարգում, մանավանդ վերջին տարիներին ֆինանսների փոխնախարարի պաշտոնում՝ համակարգման, ինքնաշխատ համակարգերի ստեղծման (երբ որոշումը կայացնում է հենց համակարգը, ոչ թե սուբյեկտիվ կերպով՝ ղեկավարը), փորձել է այնպես անել, որ համակարգերն այդ սկզբունքով աշխատեն: Ինչ վերաբերում է մասնագիտական մոտեցմանը, իրեն հավաստիացրել են, որ Տեսչական մարմինը բավականին որակավորված և գիտակ է մասնագիտական խնդիրների լուծման առումով, ավելի շատ համակարգային կարգավորման անհրաժեշտություն կա, և ինքը ապավինելու է մասնագիտական գիտելիքների մասով հենց Տեսչական մարմնի ունեցած որակներին և գիտելիքներին: Այդ առումով իր, ինչպես նախարարը նշեց, համակարգաստեղծ փորձի և մասնագիտական գիտելիքների, ներուժի համատեղ ջանքերով, կարծում է հնարավոր կլինի հաղթահարել եղած խնդիրները, ինչը կառավարությունը և հանրությունը իրենից ակնկալում է: Միաժամանակ կջանա, որ նաև մասնագիտական գիտելիքների առումով բավարար մակարդակ լինի միմյանց հետ շփվելու, որոշումներ կայացնելու համար:

Կ. Չիլինգարյանի հարցին, թե կենսագրականում էլ նշված է՝ ֆինանսների մասնագետ, այս ոլորտի հետ չի առնչվել: Սննդամթերքի անվտանգության ոլորտում մեր երկրում, թեև համեմատած այլ ոլորտների, աշխատանք տարվում է, բայց բազմաթիվ խնդիրներ կան, ինչպես է պատկերացնում, ինչպես պետք է կառավարել ոլորտը՝ դրական արդյունքներ ստանալու համար:

Ա. Հայրապետյանը պատասխանեց, որ փորձելու է աշխատել հնարավորինս շատ մասնագիտական կառույցների և ինստիտուտների հետ, լսելու է բոլոր խնդիրները և համատեղ ուժերով փորձելու է լուծումների վերաբերյալ որոշումների ձևավորման համակարգ ունենալ: Ինքն առաջարկությունը ստանալուց հետո տարբեր քննարկումների արդյունքում փորձել է հասկանալ՝ արդյոք լուծելի է այդ խնդիրը թե ոչ, և ունի նախնական պատկերացումներ, ինչ-որ առումով Տեսչական մարմնում տեսչական գործառույթ իրականացնողի ֆունկցիոնալ մասից պետք է լինի նաև մասնագիտական գործառույթներ, որոնք Տեսչական մարմնի գործառույթների հետ որոշակի միահյուսվել են, և տեսչական մարմնի համար է դժվար այդ աշխատանքներն իրականացնել, և քաղաքականություն իրականացնողների, մասնագիտական եզրակացություններ տվողների համար: Բերելով հավատարմագրված լաբորատորիաների հանդեպ վստահության օրինակը՝ Ա. Հայրապետյանը հարց բարձրացրեց, թե Տեսչական մարմինը պետք է հավատա հավատարմագրված լաբորատորիային, թե ոչ, թե պետք է հավատարմագրված լաբորատորիայի արդյունքների հիման վրա հենվելով եզրակացություններ տա: Կա մի դաշտ, որը խիստ մասնագիտական տիրույթ է, և կա մյուս մասը՝ ռիսկերի տիրույթը, այսինքն առողջապահական խնդիրներից գալով փորձել դրանք տեղայնացնել, հասցնել այն մակարդակին, որ անվտանգության ռիսկային համակարգը հասկանալով, փորձել թիրախային և Տեսչական մարմնի անհրաժեշտ միջամտությամբ այդ հարցերը լուծել: Բայց այն տեղերում, որտեղ միահյուսում կա, իրականում դժվար խնդիր կա: Դա տեսել է օրենսդրությունն ուսումնասիրելով, և կարծում է, Խորհրդի և հատկապես հանրային սեկտորի աջակցության կարիքը կա՝ իրականում զգալու, թե այդ տարանջատումը և սահմանները ճիշտ են գծված արդյոք: Այս առումով ինքը փորձելու է հասկանալ ինչքանով է մասնագիտական գործունեությունը հենց Տեսչական մարմնի իրավասությունների ներքո, և եթե այդպես է, որևէ հավատարմագրվածի եզրակացություն եթե լինի, Տեսչական մարմինը պետք է որոշի, հակառակ դեպքում, մասնագիտական կառույցները իրենց

պատասխանատվությամբ պետք է այդ որոշումները կայացնեն: Եթե կարողանալու ենք այս գիծը գծել, ճիշտ լուծումը կլինի, հստակ կաշխատի, եթե խառն է լինելու, խնդիրներ լինելու են: Մի որոշում կկայացվի, հետո այդ որոշման նկատմամբ վերահսկողության մեխանիզմով չի կարող ազդել: Մասնագիտական և տեսչական գործառույթների հստակ սահմանազատում անելը շատ կարևոր է: Եթե հասկանանք շատ խիստ մասնագիտական է, լաբորատոր գիտելիքներ են պետք, համակարգը պետք է կառուցվի ազդանշանների հիման վրա:

Լ. Նանուշյանը խոսեց Ա. Հայրապետյանի հետ երկարատև համագործակցության մասին՝ բարձր գնահատելով նրա պրոֆեսիոնալիզմը հանրային ֆինանսների կառավարման և հանրային կառավարման հարցերում, այնուամենայնիվ, շեշտադրում արեց մասնագիտական կողմի վրա: Մանավանդ, Առողջապահության նախարարությունը շահագրգիռ այն կողմերից մեկն է, որը հասկանում է՝ որքան Տեսչական մարմինը արդյունավետ աշխատի, այնքան առողջապահության ոլորտում ավելի քիչ խնդիրներ կլինեն, ինչքան մոտեցումները ճիշտ թիրախավորված չլինեն, այնքան առողջապահության ոլորտի խնդիրները կշատանան: Ցավոք, այն հիվանդությունները, որոնք կարող էին կանխարգելվել, կառավարվել մինչև առողջապահության ոլորտ հասնելը, վերջին տարիների ընթացքում իրենք չեն տեսնում տեսանելի դրական տեղաշարժեր, դեպքերի նվազեցում կամ կանխարգելում, ինչը վկայում է այդ համակարգի ոչ արդյունավետ աշխատանքի մասին: Դա է պատճառը, որ հետաքրքրված են բացի հանրային կառավարման ունակություններից, որոնք իրավամբ շատ մեծ նշանակություն ունեն ցանկացած համակարգի աշխատանքի մեջ, բայց կցանկանար իմանալ պարոն Հայապետյանը արդյոք արդեն ունի իր առջև դրված հիմնական խնդիրները և ուղղությունները, այդ ոլորտում իր անելիքները, արդյոք ունի որևէ տեսլական, և եթե կան, որոնք են հիմնական կողմնորոշիչները: Լաբորատորիաների մասով հասկանալի է մոտեցումը, սակայն այստեղ խոսքը վերաբերում է և զոոնոզ և աղիքային հիվանդություններին և սննդամթերքի անվտանգության այն

տեսություններին, որոնք վերաբերում են դաշտից մինչև պատառաքաղ ամբողջ շղթային, և ունի արդյոք պարոն Հայրապետյանը նման պատկերացում, տեսլական:

Նախարարն ավելացրեց, որ իհարկե պարոն Հայրապետյանը կխոսի, բայց քանի որ տեսչական մարմիններն ըստ էության օրենքներ աշխատեցնող կառույցներ են, կարևորագույն ֆունկցիա կատարող մարմիններ են պետական կառավարման համակարգում, ըստ էության օրենքները աշխատեցնող մի քանի մարմիններ կան՝ տեսչական մարմիններ, ՊԵԿ, ոստիկանություն, ԿԲ-ն՝ որպես բանկային համակարգի օրենքներ աշխատեցնող մարմին, ուզում է շեշտադրել և առաջարկել, որ Խորհուրդը ավելի մեծ պատասխանատվություն վերցնի տեսլականի ձևավորման և առաջնահերթություններ դասավորելու, դասակարգելու հարցում, դրանք իրականացնելու ուղղությամբ: Իհարկե, ռիսկերի ինստիտուտի ներգրավվածությունը պետք է որևէ կերպ փորձել հետ բերել, որպեսզի ռիսկերի ինստիտուտները, հասարակական կազմակերպությունները կարողանան աջակցել, բայց առաջարկեց այս խնդրով օգնել պարոն Հայրապետյանին, ունեցած փորձով, մասնագիտական գիտելիքներով ձևավորել այն առաջնահերթությունները, որոնք այսօր ամենակարևորն են թե օրենքը կիրարկելու տեսանկյունից, թե նաև բնականաբար մարդկանց առողջության տեսանկյունից:

Ա. Հայրապետյանը ներկայացրեց, որ միջազգային իրականությունն ուսումնասիրելիս երևում է, որ հիմնականում տեսչական գործառույթը մարդկանց առողջության համար է իրականացվում: Ինչպես նախարարն ասաց, կարգավորումները նախատեսված են, Տեսչական մարմինը պետք է հետևի դրանց իրականացմանը, բոլորը լինեն իրենց տեղերում, իրականացնեն իրենց գործառույթները: Օրենսդրությամբ էլ է սահմանված, որ ռիսկերի համակարգի մեջ հենց առողջապահության վտանգների մասին պետք է լինի գիտական հանրության կողմից մշակված փաստաթուղթ: Եվ դրա շուրջ պետք է մնացած համակարգերը աշխատեն: Այդ փաստաթուղթն իրավական ակտի տեսքով դեռ չի հաստատվել, միգուցե քննարկվեն հետագայում աշխատանքային կարգով, սակայն հիմնական

կետերը, հիվանդությունների ռիսկերը պետք է ձևավորեն գիտական կազմակերպությունները, Առողջապահության նախարարությունն էլ իր կանխատեսումներով վարակիչ հիվանդությունների կանխարգելման անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկի: Տեսչական մարմինը լինելու է մի դեպքում ձեռքերը, մյուս դեպքում՝ աչքերը, որը հետադարձ կապ կապահովի, թե ինչ է կատարվում իրականում: Առողջապահության համակարգում կհասկանան՝ արդյոք դրանք են այն ռիսկերը, որոնց վրա պետք է ժամանակին ազդեցություն ունենալ, ոչ թե միանգամից: Համաձայն է, որ պետք է կանխարգելման համակարգերի վրա հիմնվել, ինչը դժվար է, որովհետև պետք է կանխատեսելի գործընթացների հիման վրա կանխարգելման քայլերը ճիշտ ձևակերպել, ոչ թե լինի իրավիճակ, որից հետո նոր Տեսչական մարմինը չեզոքացնի: Նա գտնում է, որ առողջապահության ոլորտի մասնագիտական համակարգի ձևավորումը կօգնի թիրախավորել խնդիրները:

Կանխարգելման գործառույթի տեսակետից հենց միջազգային փորձն էլ ցույց է տալիս, որ դա դժվար իրագործելի է, պիտի չեզոքացնեն դա, որպեսզի երկիր չներթափանցի: Օրինակ, եթե կա համաշխարհային մասշտաբի որևէ հիվանդություն, պետք է ազդակ ստանալուց հետո դիրքավորվել, չեզոքացնել այդ հիվանդությունների ներթափանցումը, այստեղ մասնագիտական գիտելիքը կարևոր է, բայց հենց միջազգային փորձում էլ դժվարություն կա ռիսկերը չեզոքացնելու առնչությամբ: Օրինակ, կորոնավիրուսը, թեև բոլորը կանխարգելիչ քայլեր արեցին, միևնույնն է, ներթափանցեց բոլոր երկրներ: Նման օրինակով, բուսական, կենդանական ծագման հիվանդությունները, որքան էլ դիրքավորվենք, հնարավոր է դրանց ներթափանցումը: Այստեղ մասնագիտական գիտելիքները կարևոր են, բայց իր կարծիքով դա պետք է լինի ոչ թե հենց Տեսչական մարմնի ձևավորած գիտելիքներ, այլ այնքանով, որքանով առողջապահության համակարգի կողմից ներկայացված հաշվետվությունները հնարավոր կլինի ընկալել և կիրառել:

Նախարարը վերահաստատեց, որ ավելի շատ պետք է համակարգ լինի, որ գիտելիքը կարողանան կիրառել:

Լ. Նանուշյանը նկատեց, որ շատ հարցեր կարող են լուծվել շատ հեշտությամբ, կանխարգելման միջոցով, դրա օրինակը կարող է լինել պատվաստումների հստակ իրականացումը, որը ցավոք, խնդիրներով է իրականցվում: Կարող են լինել դեպքեր, երբ պատվաստումներն իրականացնելիս հանդիպեն խնդիրներ, սակայն վաղուց գիտական հանրույթը ձևավորել է այդ բոլոր ուղղությունները: Հասկանում է, պետք է միասին շատ սերտ աշխատեն, որովհետև իրենք էլ տիրապետում ենք հիվանդների թվաքանակին, ուղղություններին, ռիսկային վայրերին, որտեղ ավելի շատ են վարակման կամ թունավորման դեպքերը, և Տեսչական մարմինը կարող է ավելի արագ, հրատապ միջամտություն անել, իր ամենօրյա աշխատանքում կանխարգելիչ միջոցառումներն իրականացնել, բայց այնուամենայնիվ, ինքը համաձայն է նախարարի կարծիքի հետ, որ կարող են հետագա առաջնահերթությունները սահմանելիս օգնել Ա. Հայրապետյանին, այդ դեպքում այլ կերպ հարցադրում՝ նա տեսչական մարմնի այսօրվա խնդիրներն արդեն պատկերացնո՞ւմ է արդյոք, կազմակերպման կամ ոլորտային, որոնք ուշադրության արժանի են:

Նա առողջապահության նախարարության և անձամբ իր անունից պատրաստակամություն հայտնեց աջակցել Ա. Հայրապետյանին թե առաջնահերթությունների նախանշման, թե խնդիրների վերհանման հարցում, տեսչական մարմնի և Ա. Հայրապետյանի հետ ձևավորելու ինչ-որ չափով ընդհանուր օրակարգ՝ ներկայացնելով ոչ միայն իրենց տեսած խնդիրները, այլև լսելու գործընկերների կարծիքը, թե որոնք են այն ուղղությունները, որոնք ավելի կբարձրացնեն աշխատանքի արդյունավետությունը:

Ա. Հայրապետյանի կարծիքով՝ պրակտիկ խնդիրները՝ ոչ, իսկ տեսական մակարդակում դեռևս դատողություններ են, որոնք պետք է քննարկել համապատասխան մասնագետների հետ, որոշակի դիտարկումներ կան, բայց ինքը դժվար համոզվող է, պետք է բազմակողմանի ուսումնասիրի հարցերը, հետո կարծիք ձևավորի, շատ դեպքերում տնտեսավարողը կարող է մի բան ասել,

օրենսդրությունը մեկ այլ բան պահանջել, սակայն համակարգը ինչ-որ կերպ աշխատում է: Դրա համար պետք է բոլորին լսել, հասկանալ: Եթե խնդիր չլինի, համակարգ չի լինի:

Դանիելյանի կարծիքով, Ա. Հայրապետյանը համեստորեն չներկայացրեց, որ տեսչական մարմնի խնդիրներին էլ տեղյակ է, և ընդհանուր օրենսդրական բացերին, և շահերի բախման մասով տեղյակ է, անդրադարձավ հարցին, թե ինչքանով տեսչական մարմնի ղեկավարը պետք է մասնագիտական գիտելիք ունենա: Զուտ Տեսչական մարմնի բարեփոխման արդյունքում ենթադրվում է, որ Տեսչական մարմնի ղեկավարությունը պետք է լինի լավ ղեկավար և լավ վարչարար, իսկ մասնագիտական մասը ապահովվում է աշխատողների շնորհիվ, և հատկապես այս փուլում, որ ակնկալում են, որ պետք է համակարգ ձևավորվի, իր կարծիքով նույնիսկ մասնագիտականը կարող է խանգարել, քանի որ դեռևս ՍԱՊԾ-ից ՍԱՏՄ անցումը չենք կարողանում կատարել, որովհետև կանխատեսումները մասնագիտների մոտ թույլ չեն տալիս անցումը կատարել, իսկ օրենքն ընդունվել է, և պետք է գնալ այդ ճանապարհով: Այդ իմաստով, Տեսչական մարմնի գործառույթներն ըստ էության, ակնկալում են համակարգ ձևավորել, որը թույլ կտա Տեսչական մարմնի՝ օրենքով նախատեսված գործառույթներն իրականացնել: Նաև նշեց, որ Ա. Հայրապետյանն այլ տեսչական մարմինների կառավարման խորհուրդների անդամ է, տեսչական մարմինների գործունեությանը քաջատեղյակ է:

Ա. Հայրապետյանը ներկայացրեց, որ ինքը մասնագիտական գիտելիքները շատ է կարևորում, ինքն էլ բազմաթիվ վերապատրաստումներ է անցել հենց ֆինանսների ոլորտում, սակայն կարիերային աստիճանակարգով բարձրանալիս աստիճանաբար մասնագիտական գիտելիքներն անհրաժեշտ են լինում ճիշտ ու արագ ընկալելու և կողմնորոշվելու համար, որոշումը հեշտ կայացնելու համար, սակայն ավելի բարձր մակարդակներում կառավարման գործառույթն էլ ավելի է կարևորվում, մասնագիտականը շատ կարևոր է, որ այլ մասնագետների հետ հեշտությամբ հնարավոր լինի շփվել, որոշումներն արագ կայացնել: Դժվար է առանց

ոլորտային մասնագիտական գիտելիքների քննարկել նեղ մասնագիտական հարցեր, սակայն դրանք որոշակի դժվարություններ են առաջացնելու միայն մի ժամանակահատվածում, քանի որ թեև ցանկալի կլիներ՝ նաև մասնագիտական գիտելիքներ լինեին, բաց չլիներ, սակայն կա, և ինքը փորձելու է այդ բացը արագ լրացնել, որպեսզի հնարավոր լինի մասնագիտական հաղորդակցման խնդիրը նույն լեզվով քննարկել և արդյունավետ աշխատել:

Ա. Առուշանյանը, չթերագնահատելով մասնագիտական գիտելիքները, վերահաստատեց Ա Հայրապետյանի խոսքը, որ ինչքան բարձրանում է պաշտոնը, այնքան ավելի կարևորվում են կոմպետենցիաները, քանի որ ներկայումս տեսչական մարմինները, եթե դիտենք հենց մասնագիտական տեսանկյունից, գրեթե բոլորը մի քանի ուղղություններ ունեն, այսինքն հարց է ծագում, եթե թեկնածուն ունենար կրթություն որևէ մասնագիտության գծով, ապա մյուս ուղղությունները ինչպես էր կառավարելու: Դժվար է գտնել թեկնածու, ով ունենա բոլոր ուղղություններով նեղ մասնագիտական գիտելիքներ, նաև կառավարման մեծ փորձ: Անհրաժեշտ է կոմպետենցիաների վրա հիմնվելով կատարել ընտրություն, որպեսզի կառավարման արդյունավետությունը բարձրանա բոլոր ուղղություններով:

Ա.Առաքելյանը նկատեց, որ հիմա այդ բացի հարցը չեն լուծում, հիմնվում են տեսչական մարմնի մասնագիտական ռեսուրսների վրա: Նա խնդրեց Ա. Հայրապետյանին իր գործունեությունից համակարգի արդյունավետության բարձրացման օրինակ բերել, որը պրոյեկտենք այսօրվա տեսչական մարմնի աշխատանքի վրա, այն բարելավելու վրա և ինչպես է որոշելու իր աշխատանքի առաջնահերթությունները, խնդիրների լուծման ինչ հերթականություն է պատկերացնում: Եթե մասնագիտական և համակարգային խնդիրները մտնեն կոնֆլիկտի մեջ, ինչպես է լուծելու դրանք: Մի քանի տարվա հաշվետվություններից հասկանալի է դառնում, որ տեսչական մարմինն իր աշխատանքները կատարելու համար ունի ռեսուրսների խնդիր, մասնավորապես՝ ֆինանսների և մարդկային ռեսուրսների խնդիր: Իր քաղաքականությունը որն է լինելու այդ ուղղությամբ:

Ա. Հայրապետյանը կարծիք հայտնեց, որ միայնակ ոչինչ չի հաջողվի անել, պետք է անել միասին, ակնկալում է և Խորհրդի և հասարակական սեկտորի աջակցությունը, կկազմակերպվեն աշխատանքային քննարկումներ, փորձելու է համակարգել և այնպիսի ուղղություն տալ այդ աշխատանքներին, որը կբավարարի համակարգի առջև ծառացած խնդիրները լուծելուն: Թեև տեսչական մարմիններն ունեն իրենց առանձնահատկությունները, այնուամենայնիվ, ամենամեծ խնդիրը, որ ռիսկերի վրա հենված չեն ոչ մեկ, այլ տեսչական մարմիններում որպես խորհրդի անդամ հասկացել է, որ ռիսկերի վրա հիմնված մոտեցում չի եղել, եղել է ինչ-որ սկզբունքով ձևավորված ծրագիր, ցուցակ, որով գնացել ստուգել են ստուգաթերթերով, դասակարգել որտեղ կան խնդիրներ, որտեղ՝ ոչ, կազմել հաշվետվություններ: Իր պատկերացրած համակարգը մաքսիմալ պետք է ռիսկերի վրա հիմնված լինի, որպեսզի անտեղի չանհանգստացնեն ոչ տնտեսավարողին, ոչ սպառողների, և շատ ավելի առաջնային է սննդամթերքի անվտանգության ոլորտում հենց սպառողների, նաև առողջապահական համակարգի ազդանշանները: Պետք է հիմնվել հենց այդ ազդանշանների վրա և լուծել այդ խնդիրները: Ռեսուրսների առումով, որպես ֆինանսների համակարգում ծառայած և շատ փորձություններ տեսած պաշտոնյա՝ կարծում է, որ անտեղին է անընդհատ ֆինանսական ռեսուրսներ ներգրավելու անհրաժեշտության մասին խոսել: Եթե մենք կարողանանք օրինակ առողջապահության համակարգի հոգսը թեթևացնել, դա հնարավորություն կտա բանակցել ռեսուրսների խնդիրը լուծելու համար, ասել՝ այսքան հիվանդ ձեզ մոտ պակասել է, որովհետև սննդային թունավորման դեպքերով պայմանավորված այսքան դեպքեր անցյալ տարի եղել են, հիմա չեն լինի, ձեզ մոտ ինչքան ռեսուրս կավելանա: Բայց քանի դեռ արդյունք չես տալիս, դա նման է տնտեսագետների բերած օրինակով՝ ծակ տոպրակի, ինչքան ուզում եք լցրեք, չի լցվելու, որովհետև արդյունք չի բերում: Ռեսուրսների խնդիրը միայն արդյունքներով կարող է լուծվել: Բայց եթե արդյունքը չի կարողանում ձևավորել, եթե արդյունքը հետևից չի գալիս, ոչ ոք այդ գումարները չի տա:

Նախարարը խնդրեց իր կողմից ստեղծված համակարգի մի օրինակ ներկայացնել:

Ա. Հայրապետյանը ներկայացրեց, որ Ֆինանսների նախարարությունում մակրոտնտեսական քաղաքականություն որպես այդպիսին չի եղել կամ եղել է մի վարչություն, որի հետ ոչ ոք հաշվի չի նստել, հիմա կարող են միջազգային բոլոր կառույցներից հարցնել, թե ինչպես են վերաբերվում այդ համակարգին: Վարչությունն ունի թե գիտելիք, թե գործիքակազմ, թե ինքնուրույն որոշում կայացնելու հնարավորություն: Երկրորդը՝ ժամանակին մարդիկ պետական պարտքի վերաբերյալ մտածել են՝ սա վերջն է, պարտքերն այլևս չեն կառավարվի, երկրի վրա պետք է պրատքի մեծ ցուցանակ դնել և փակել: Սակայն ժամանակը ցույց տվեց, որ (նույնպես կարող են նաև միջազգային կառույցներից հարցնել), մոռացել են պետական պարտքի մասին: Այժմ մեր երկիրը բավականին լավ իրավիճակում է, շատ հարմարավետ դիրքում: Դա ինքնաշխատ համակարգի շնորհիվ է, և բոլոր ցուցանիշները այժմ բաց են ու հրապարակային, պարտքի որևէ ցուցանիշ, որն անհրաժեշտ է, անհնար է չգտնել: Սա բաց, թափանցիկ, քաղաքականություն ճիշտ ձևավորելու արդյունքում է, որ հնարավոր է եղել եռացող իրավիճակը բերել, հանդարտեցնել և դարձնել կառավարելի:

Հաջողված փորձի 3-րդ օրինակի մասին խոսեց, շատ հակիրճ՝ ներկայացնելով, որ այն եղել է խաղային ոլորտում՝ սկսած գովազդից մինչև անկանխիկ գործարքներ: Խնդրելով չքաղաքականացնել իր խոսքերը՝ նշեց, որ տարբեր ժամանակներում տարբեր կառավարությունների հետ աշխատել է, և իրեն ընդունել են ոչ թե քաղաքական կողմնորոշման, հարմարվողականության, այլ միայն այն բանի համար, որ իր մասնագիտական կարողություններն ու հմտությունները գնահատվել և նպաստ են բերել, դրա համար շարունակել է աշխատել: Նա հույս հայտնեց, որ բոլորի աջակցությամբ կշարունակի իր արդյունավետ գործունեությունը նաև այս բնագավառում: Կարևորեց այս պաշտոնում հանրային սեկտորի աջակցությունը, քանի որ պետական կառավարման համակարգի հետ

աշխատանքային բավարար փորձ ունի, գիտի որ հարցերը ում հետ քննարկել և արդյունավետ որոշումներ կայացնել, սակայն սպառողների և հասարակական սեկտորի հետ աշխատելու դաշտում կա այդ փորձի պակասը:

Նախարարը հաստատեց, որ մակրոտնտեսական քաղաքականության մեջ շատ լուրջ առաջընթաց է արձանագրվել, վերջին տարիներին ֆինանսների նախարարությունը նաև էկոնոմիկայի նախարարությանը համահունչ գործընկեր է դարձել, սկսել են նույն տեսակետը կիսել, իսկ պարտքի մասով՝ թե կորոնավիրուսի ընթացքում ինչքան հեշտ եղավ պետական բյուջեն համալրել անհրաժեշտ ռեսուրսներով, մեծ դժվարություններ չեղան, մինչդեռ աշխարհի բազմաթիվ երկրներ սնանկության եզրին են պետական պարտքի գերծանրաբեռնված լինելու պատճառով, շատերն արդեն սնանկ են: Այս առումով օրինակը տեղին է, ռեսուրսների պահով նույնպես համաձայն է, երբ փորձում են ինքերցիոն ճանապարհով լուծել խնդիրը, որակական նոր մակարդակ բերել, օրինակ՝ թունավորումների հետ կապված թվային մեխանիզմներ ունենալը, հնարավոր է ոչ մի ռեսուրս էլ չպահանջվի, քննարկվում են սննդամթերքի անվտանգության ռազմավարության մեջ սննդի շղթայի բոլոր մասնակիցների մոտ հավաստագրման մեխանիզմ դնել, քանի որ դրանք բոլորը տարբեր տեսակի հավատարմագրված ընկերությունների կողմից հավաստագրվեն միջազգային հավաստագրման համակարգով, իսկ տեսչական մարմինը կարող է ունենալ ընդամենը մի էլեկտրոնային հարթակ, որով վերահսկում է մասնակիցների հավաստագրված լինելը, դա միայն կարող է կտրուկ իջեցնել ռիսկի չափը, իսկ մենք ռիսկի հետ աշխատում ենք ֆիզիկական շփումների միջոցով, բնականաբար, այսպես ռեսուրսները չեն հերիքի, կարելի է բաշխել համակարգը՝ մի մասին ուղարկել 3-րդ անձանց մոտ ստուգման և պահանջել միայն ստուգված լինելը հավաստող փաստաթուղթ, կարող է դա ավելի արդյունավետ ստուգում լինել, քան տեսուչների կողմից կատարված ստուգումը:

Ա. Պողոսյանը ողջունելով բոլորին՝ ասաց, որ հարց չունի Ա. Հայրապետյանին, քանի որ բազմիցս առիթներ ունեցել է տարբեր հարցեր ուղղել նրան, այդ թվում՝ վերջին զարգացումների մասին, սակայն ցանկություն հայտնեց մի քանի միտք արտահայտել:

Ամենօրյա ռեժիմով շփվել և աշխատել են միասին մոտ 15 տարի, բոլորի աչքերում կարող է օբյեկտիվորեն ընկալվել որպես շահագրգիռ կողմ, իրականում այդպես էլ կա, սակայն դա միայն առաջին հայացքից: Ավելի լայն տեսանկյունից նայելով՝ Ա. Հայրապետյանի՝ Ֆինանսների նախարարությունից գնալով նախարարությունը կորցնում է լուրջ, փորձառու մարդու, որպես գործընկերոջ, մարդու, որի վրա կարելի է հենվել, նրան վստահել ամենապատասխանատու, ամենալուրջ բարեփոխումների ընթացքը, հասկանում է, որ ոլորտում կան տարիներ շարունակ կուտակված, չլուծված կամ վատ լուծված հարցեր, և այստեղ մարդիկ են, ովքեր լինելով մասնագիտական հասարակական հատվածի կամ պետական կառավարման տարբեր մարմինների ներկայացուցիչներ, մտահոգ են այդ խնդիրներով և ցանկանում են օր առաջ տեսնել դրանց լուծումը, ինչը շատ ողջունելի է: Մյուս կողմից կարծում է՝ այնքան էլ իրատեսական կամ ազնիվ չի լինի այդ բոլոր հարցերը մեկտեղել և ժամանակի որևէ պահի վրա կենտրոնացնելով ուղղել մեկ մարդու, մեկ օրում: Տարբեր մտքեր արտահայտվեցին մասնագիտական գիտելիքների, կառավարման վարպետության մասին, ինքն ամբողջովին կիսում է կարծիքները, ինչ խոսք, այլ հավասար պայմաններում շատ ցանկալի էր, որ գերատեսչության ղեկավարը լինի նաև նեղ մասնագիտական գիտելիքներով օժտված, բայց արդյոք միշտ կան այլ հավասար պայմանները, այսինքն՝ մարդ, որին ներկայացնողները այդչափ վստահում են, կամ նախարարի վստահությունը վայելող այլ անձ ունենք, որին կարելի է բարեփոխումների հետագա ընթացքը վստահել: Արդյոք կան այդ տեսակ թեկնածուներ, եթե կան, կարելի է նայել հարցին այդ տեսանկյունից, եթե չկան այլ հավասար պայմանները, փոխարենը կա մարդ, որը համաձայնել է իր մասնագիտական ճանապարհին այդպիսի կտրուկ փոփոխություն

կատարել, համաձայնեք, որ շատ քչերը կունենան նման համարձակություն, ուժ ու եռանդ կգտնեն իրենց մեջ, տրամադրվեն շատ կարևոր ու պատասխանատու աշխատանքի: Կարծում է՝ դա շատ պատասխանատու և խրախուսանքի արժանի քայլ է: Եթե Խորհուրդը որոշի կողմ քվեարկել պարոն Հայրապետյանի թեկնածությանը, ինքը շատ ուրախ կլինի:

Նախարարն ավելացրեց կարող է տարօրինակ թվալ, բայց ինքը կարծում է, որ երբեմն մասնագիտական գիտելիքը խանգարում է ավելի ժամանակակից որոշումներ կայացնել, որովհետև ծանրաբեռնված լինելով մասնագիտական հանրության պրոբլեմներով, անցյալի խնդիրներով, մարդը չի կարողանա նոր էջից կամ զրոյական կետից նայել խնդիրներին և զրոյական կետից որոշում կայացնել, ոչ թե իներցիայով, տարբեր տեսակի լիցքերով, պատմական և ոչ պատմական հիշողություններով ծանրաբեռնված: Առաջարկի մասին ինքն էլ է շատ մտածել, ի վերջո իր կարծիքով, մանավանդ այս ոլորտում շատ կարևոր է, որպեսզի մարդ, ով գալիս է, մտքերը մաքուր լինեն տարբեր տեսակի նախկին պրոբլեմներից: Սիստեմավորված մտածելակերպը պետք է օգնի, որ չնայելով թե այսօր ինչ կա, կառուցի ճիշտը, ունենալով այն գործիքակազմը, որ 21-րդ դարում բոլորին հասանելի է՝ արհեստական բանականության գործիքներ, թվային լուծումներ, այլ գործիքակազմ, որն այսօր հասանելի է, բայց ցավոք դեռևս շատ քիչ չափով է կիրառվում պետական կառավարման համակարգում, Տեսչական մարմնում՝ առավել ևս:

Վ. Ուռուտյանը փաստեց, որ թեկնածուն իրոք շատ տպավորիչ պրոֆեսիոնալ աշխատանքային կարիերա է ունեցել, հանրային ֆինանսների կառավարման ոլորտի, նաև շատ է կարևորում նրա փորձառությունը այնպիսի կառույցների հետ, ինչպեսիք են Համաշխարհային բանկը, Արժույթի Միջազգային հիմնադրամը, Ասիական զարգացման բանկը: Այս կառույցները բավականին մեծ աջակցություն են ունեցել ՀՀ-ում համակարգերի ստեղծման, արդյունավետ կառավարման հարցում, կարևորում են, որ այդ համակարգերը լինեն, կարևորում են նաև մարդկային

կապիտալի զարգացումը, մասնագետների մշտապես վերապատրաստումը, գիտության հետ սերտ աշխատելը, մի կողմից որպես ՀԱԱՀ ռեկտոր պատրաստակամություն է հայտնում համագործակցել, Տեսչական մարմնի հետ համագործակցության ավանդույթներ կան, պատրաստ են խորացնելու, նաև մասնագիտական վերապատրաստումներ կազմակերպելու: Ունի արդյոք թեկնածուն տեսլական՝ կապված կադրերի մասնագիտական վերապատրաստման, մարդկային կապիտալի ինստիտուցիոնալ կարողությունների հզորացման հետ:

Ա. Հայրապետյանը ներկայացրեց, որ ինքը դեռ չի պատկերացնում՝ Տեսչական մարմինն ինչ հնարավորություններ, ինչ գործիքակազմ ունի, բայց իր բոլոր հաջողությունների հիմքում ընկած է մարդկային կապիտալի հետ ճիշտ աշխատելը: Ինքը մշտապես իր վրա աշխատել է և շարունակում է աշխատել, գտնում է, որ մարդկային կապիտալն է այն շարժիչ ուժը, որը նաև գիտելիք է բերում, տնտեսական աճի պոտենցիալը՝ կապիտալ, գիտելիք, ներդրում, մարդ, արտադրողականություն: Այս ամենի հիմքը ի վերջո նորից մարդն է, կարևորում է գիտելիքը, այնուամենայնիվ հակված է միջազգային վերապատրաստմանը, բայց ազգային մակարդակում իր փորձառության ժամանակ չի եղել, փորձել են տնտեսագիտական համալսարանի հետ համագործակցել: Վերջին տարիներին անգամ իր ղեկավարած վարչության աշխատողների պարգևատրումները կապել է վերապատրաստումների հետ: Կփորձի ճշտել տեսչական մարմնի կարողությունները և օգտագործել համագործակցության հնարավորությունները: Գիտելիքը և կարողությունը չերևացող, սակայն շատ կարևոր բան է, իսկ դա ձևավորվում է կրթվելով, շփվելով տարբեր մասնագետների հետ, իրենց գիտելիքները փոխանակելով: Սիրով կհամագործակցի գյուղատնտեսական ոլորտի գիտական հաստատությունների և կազմակերպությունների հետ:

Ա. Առաքելյանը հավելեց, որ ներկայումս գիտահետազոտական աշխատանքները ակադեմիայի համակարգում են իրականացվում, հորդորեց մասնագիտական

խորհրդատվության համար համագործակցել գիտահետազոտական կազմակերպությունների հետ:

Ա. Հայրապետյանը հավաստիացրեց, որ հորդորն ընդունելի է, և ինքը կողմ է նորարարությանը, նոր գիտելիքներ, նոր գաղափարներ ներգրավելուն: Նոր գիտելիքներով զինված կադրերի ներգրավումը որոշակի անհարմարություն ստեղծելու միջոցով կստիպի տարիք ու փորձառություն ունեցող կադրերին աշխատել իրենց վրա: Դետալների մասին կարելի է խոսել, երբ համակարգին ներսից ծանոթ լինի, բոլոր հորդորները հիմա իր համար ուղենիշ են: Կցանկանար, որ Խորհուրդը ավելի նախաձեռնող, իրեն անհանգստացնող լիներ, ինչքան ավելի շատ, այնքան ավելի արդյունավետ կլինի աշխատանքը: Շարժիչ ուժը Խորհուրդն է: Որքան պասիվ լինի Խորհրդի պահանջը, այնքան աշխատանքի արդյունքները չեն գոհացնի և Խորհրդին, և անձամբ իրեն: Առանց խնդիրների վերհանման՝ չի լինի լուծում:

Նախարարը ներկայացրեց, որ Խորհրդում քննարկումներն անցնում են բուռն, բովանդակային, առաջարկեց նախորդ 2 տարիների նիստերի արձանագրությունները տրամադրել Ա. Հայրապետյանին, այնտեղ բարձրացված ու դեռևս չլուծված հարցեր կան, որոնք շարունակում են մնալ նույնչափ արդիական: Նա առանձնացրեց 3-4 հարց.

1. Սպանդանոցների թեման- խնդիր էր դրվել Տեսչական մարմնի առջև՝ տալ այն գործիքակազմի նկարագրությունը, որն անհրաժեշտ է, որ խնդիրը վերջնականապես լուծվի, ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, որպես քաղաքականություն մշակող մարմին գտնում է, որ այս հարցը պետք է լուծել, իրենք պատրաստ են աջակցել և գործիքակազմի տրամադրման ուղղությամբ, հարցը քննարկման փուլում է, իր խնդրանքը և առաջարկը այս ուղղությամբ այն է, որ վերանայեն, պետք է տալ այն գործիքակազմը, որ բավարար է, որ խնդիրը լուծեն, որովհետև մի քանի անգամ քննարկումների արդյունքում հանգել են նրան, որ առաջարկ է եկել, որոնք բավարար չեն եղել խնդիրների լուծման համար: Խնդրեց վերանայել: Ինքը բազմիցս ասել է իր մոտեցումը, եթե ուզում ենք խնդիրը

արմատախիլ անել, անհրաժեշտության դեպում պետք է գնալ նաև կոշտ քայլերի, կոշտ լուծումների:

2. Հաշվետվության մեջ էլ երևում է, որ խնդրահարույց է այն, որ սննդային թունավորումներ են լինում, և այդ դեպքերն ունենում են համանման ախտանիշներ: Դեպքերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ եթե մի քանի ռիսկային կետերի նկատմամբ վերահսկողությունն ուժեղանա, օրինակ՝ եթե իմանանք, թե ում ենք սանգրքույկ տվել, ում չենք տվել, բայց պարզվում է՝ թունավորման բոլոր դեպքերի պարագայում ընկերություններում աշխատել են մարդիկ, ովքեր սանգրքույկ չեն ունեցել, դա տվողներն էլ, աշխատողներին գրանցողներն էլ պետական համակարգն է, անհրաժեշտ է վերահսկողական համակարգ ունենալ, մի տեղ հավաքել անհրաժեշտ ինֆորմացիան, վերահսկել և ռիսկերը գնահատել, ռիսկերի վրա հիմնվել: 2021թ. հաշվետվությունը նայելիս նկատում ենք, որ բավականին երկար ժամանակ է ծախսվել, որպեսզի վերլուծեն ամեն դեպքը, գտնեն ախտանիշները և օրինաչափությունները:

3. Թունաքիմիկատների հետ կապված խնդիր, որն օրհասական խնդիր է ըստ էության, որովհետև որոշակի փոփոխություններ են կատարվել, որը թունաքիմիկատներ ներմուծողների մոտ առաջացրել է խուճապ: Թունաքիմիկատները, որոնք ներմուծման ճանապարհին են, հիմա դառնում են ներմուծման համար ոչ թույլատրելի: Հենց անվտանգության առումով հարցին պետք է լուծումներ տալ, դրա հետ կապված հարցերը շատ են, մանավանդ՝ գյուղատնտեսական:

Կան բազմաթիվ հարցեր, առաջարկում է ուսումնասիրել արձանագրությունները: Դա կօգնի, որ շարունակականությունը չկորի, ոչ թե զրոյական կետից սկսել աշխատանքը: Կարող են խոստանալ ավելի հաճախակի հանդիպել, 2 ամիսը մեկ անգամ, ավելի շատ բովանդակային հարցեր քննարկել, խնդիրներ լուծել: Նախարարը պատրաստակամություն հայտնեց իր ժամանակից ներդրում անել այս կարևորագույն գործի մեջ:

Ա. Սանդոյանի կարծիքով, այն կառույցը, որը հուսով է, կղեկավարի Ա. Հայրապետյանը, ավելի կարիք ունի կառավարչական փորձի ու գիտելիքների, համակարգային լուծումների: Հարցին, թե ե՞րբ զարգացման ծրագիր կունենա, որ ներկայացնի Խորհրդին, Ա. Հայրապետյանը պատասխանեց, որ հնարավոր կլինի անդրադառնալ պահանջների և ռեսուրսների համադրումից հետո, կախված այն բանից, թե որքան խորքային են խնդիրները, մոտ 2-3 ամիս հետո: Ա. Հայրապետյանը նշեց, որ արդեն հասցրել է կայքում ծանոթանալ արձանագրություններին, որոնք ներկայացված են շատ կարգավորված:

Խորհրդի՝ նիստին մասնակցող անդամների բոլոր 9 կողմ ձայներով որոշվեց՝

1. Հավանություն տալ Արմեն Հայրապետյանի թեկնածությանը՝ Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի պաշտոնում նշանակման համար:

2. Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կառավարման խորհրդի կողմից ՀՀ վարչապետին ներկայացնել առաջարկություն Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի պաշտոնում Արմեն Հայրապետյանին նշանակման համար:

Նախարարն առաջարկեց Տեսչական մարմնի կողմից 2022 թվականին իրականացված աշխատանքների ներկայացման նպատակով կազմակերպել քննարկում Տեսչական մարմնում ս. թ. փետրվարի 16-ին՝ ժամը 14:00-ին: Կատարված աշխատանքները կներկայացնի Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Սարոյանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ,
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ Վ. ՔԵՐՈԲՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Է. ԲԱՍԵՆՑՅԱՆ